ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Երևան «_26___»_____05_____2023 թ. N __919-Ա____

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման Հավելված 1-ի «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 5-րդ կետի 5.2 ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշման 11-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությամբ և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

1. Հաստատել՝
   1) ներդրումների և արտահանման խթանման ծրագրի 2023 թվականի միջոցառման նկարագիրը, շահառուների շրջանակը, աջակցության ձևը՝ համաձայն N 1 հավելվածի,
   2) ներդրումների և արտահանման խթանման 2023 թվականի միջոցառման շահառուների կողմից նախաձեռնությունների ներկայացման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի,
   3) ներդրումների և արտահանման խթանման 2023 թվականի միջոցառման էկոնոմիկայի նախարարության կողմից նախաձեռնությունների կազմակերպման կարգը՝ համաձայն N3 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը Նախարարության պաշտոնական կայքէջում:

3. Սույն հրամանի գործողության ժամկետը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
«_26__»___05_____2023 թ. N__919-Ա___ հրամանի

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ, ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

1. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Միջոցառման նպատակներն են.
    1) նպաստել արտահանելի հատվածի (ապրանքներ և ծառայություններ) ընդլայնմանը և թիրախային շուկաներ մուտք գործելուն,
    2) ապահովել արտաքին շուկաներում հայկական արտադրանքի և ծառայությունների ներկայացվածությունը և ճանաչելիության բարձրացումը,
    3) ապահովել պոտենցիալ ներդրողների ներգրավումը, նոր գործարար կապերի ձևավորումը և փորձի փոխանակումը,
    4) աջակցել տնտեսության տեխնիկական և (կամ) տեխնոլոգիական վերազինմանը,
    5) աջակցել տնտեսության ստեղծագործ և (կամ) նորարար ոլորտների զարգացմանը:
2. Միջոցառմամբ նախատեսվում է ունենալ աջակցության 3 հիմնական ուղղություն.
    1) Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում:
    2) Գործարար համաժողովների (ֆորումների), ինչպես նաև համանման այլ միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում: Համանման միջոցառումներ են համարվում աշխատաժողովները, ներդրումային համաժողովները, տնտեսական կոնֆերանսները և այլն:
    3) Արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում, ընդ որում, միջոցառման անցկացման

փաստացի վայրը կարող է լինել թե՛ Հայաստանի Հանրապետությունը, թե՛ թիրախային շուկան, եթե ապահովվում է համապատասխան արտասահմանյան լրատվամիջոցների կողմից (առցանց, տպագիր և այլն) լուսաբանում: Տվյալ ուղղությունը ենթադրում է գովազդային արշավների, ցուցադրությունների և այլ համանման միջոցառումների կազմակերպման միջոցով բարձրացնել հայկական ապրանքանիշների ճանաչելիությունը թիրախային շուկաներում և աջակցել հայկական ստեղծագործ ոլորտների հանրահռչակմանը:

3. 2023 թվականին արդեն իսկ ապահովվել է մասնակցություն հետևյալ միջազգային ցուցահանդեսներին.
    - PRODEXPO սննդարդյունաբերության ցուցահանդես- 2023 թվականի փետրվարի 6-ից 10-ը, ՌԴ, Մոսկվա,
    - Տարեկան ներդրումային հանդիպում - 2023 թվականի մայիսի 8-ից 10-ը, Արաբական Միացյալ Էմիրություններ, Աբու Դաբի:

2023 թվականի ընթացքում նախատեսվում է ապահովել մասնակցություն հետևյալ միջազգային ցուցահանդեսներին.

- Պետերբուրգյան միջազգային տնտեսական համաժողով -2023 թվականի հունիսի 14-ից 17-ը, ՌԴ, Սանկտ Պետերբուրգ,
- Exporivaschuh կոշիկի և կաշվե իրերի ցուցահանդես-վաճառք – 2023 թվականի հունիսի 17-ից 20-ը, Իտալիա, Գարդա:
- Օրիոն 2023 ներդրումային գագաթնաժողով- 2023 թվականի հունիսի 19-ից 22-ը, ԱՄՆ, Նյու Յորք,
- Who’s Next 2023- 2023 թվականի հուլիսի 2-ից 4-ը, Ֆրանսիա, Փարիզ,
- Իննոպրոմ- 2023 թվականի հուլիսի 10-ից 13-ը, ՌԴ, Եկատերինբուրգ
- Ուայթ Միլանո կանացի հագուստի ցուցահանդես– 2023 թվականի սեպտեմբերի 22-ից 25-ը, Իտալիա, Միլան,

- A+A Դյուսելդորֆի արտահագուստի, աշխատանքային հագուստի և պարագաների ցուցահանդես – 2023 թվականի հոկտեմբերի 24-ից 27-ը, Գերմանիա, Դյուսելդորֆ,
- Չինաստանի 6-րդ միջազգային ներմուծման ցուցահանդես-2023 թվականի նոյեմբերի 5-ից 10-ը, Չինաստան, Շանհայ:

2023 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել.

- «Գիտության և գործարարության օրեր - 2023» 2023 թվականի սեպտեմբերի 28-ից 30-ը, Հայաստան, Երևան

Ցուցահանդեսներին մասնակցության, գործարար համաժողովների (ֆորումների), համանման այլ միջոցառումների մասնակցության, կազմակերպման, արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպման և իրականացման ցանկը կարող է ճշգրտվել՝ ելնելով հասարակական և քաղաքական որոշումներից:

4. Միջոցառման ակնկալվող արդյունքներն են.
   1) արտահանման ծավալների աճ,
   2) արտահանման շուկաների դիվերսիֆիկացում,
   3) արտահանման զամբյուղի դիվերսիֆիկացում,
   4) արտահանելի հատվածի արտադրանքի բարդության բարձրացում,
   5) ստեղծագործ և նորարար ոլորտների ճանաչելիության բարձրացում:

1. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

5. Միջոցառման շրջանակներում շահառու են համարվում.
   1) Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությունները,
   2) Տնտեսության ոլորտ ներկայացնող ասոցիացիաները, հիմնադրամները, հասարակական կազմակերպությունները:

2. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

6. Միջոցառման **Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ուղղության** շրջանակում շահառուներին կտրամադրվի հետևյալ աջակցությունը.
   1) Օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում ցուցահանդեսների կազմակերպում և (կամ) մասնակցության ֆինանսավորում՝ ծախսերի մինչև 100%-ի չափով:
   2) Ցուցահանդեսների ցանկը հաստատվում է սույն հրամանով՝ օրենքով սահմանված ժամկետներում: Ցանկը նախարարության կողմից որոշվում է նախարարության և (կամ) ոլորտի ներկայացուցիչների շուկայի պահանջարկի ուսումնասիրությունների հիման վրա:
   3) Ցուցահանդեսներին մասնակցությունը և (կամ) կազմակերպումը նախատեսվում է միասնական հայկական տաղավար ձևաչափով:
   4) Ծախսերը կարող են ներառել.

   ա) տարածքի վարձակալություն,

   բ) տաղավարի դիզայն,

   գ) տաղավարի կառուցապատում,

   դ) տաղավարի կահավորում և դրա գործունեության համար անհրաժեշտ ծախսեր,

   ե) մարքեթինգային և հանրահռչակման ծառայություններ,

   զ) գովազդային նյութերի դիզայն, թարգմանություն և տպագրություն,

   է) հյուրասիրություն:

7. Միջոցառման **Գործարար համաժողովների (ֆորումների), ինչպես նաև համանման այլ միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում ուղղության** շրջանակում շահառուներին կտրամադրվի հետևյալ աջակցությունը.
   1) Օտարերկրյա պետությունում կամ Հայաստանում գործարար համաժողովների (ֆորումների), աշխատաժողովների (աշխատարանների), ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցության կամ կազմակերպման ֆինանսավորում՝ ծախսերի մինչև 100%-ի չափով:

2) Այն դեպքերում, երբ նախաձեռնողը կլինի շահառուն և ոչ էկոնոմիկայի նախարարությունը, սույն հրամանով սահմանված կարգով ընտրված միջոցառումները կհամաֆինանսավորեն 20 մլն դրամի չափով, բայց ոչ ավել քան միջոցառման ընդհանուր բյուջեի 80%-ը: Մնացյալ ծախսը պետք է ֆինանսավորվի շահառուի կողմից, ընդ որում, շահառուն այն կարող է ֆինանսավորել ոչ միայն սեփական միջոցներից, այլ նաև հովանավորների և դոնոր կազմակերպությունների միջոցով:

3) Այն դեպքերում, երբ նախաձեռնողը կլինի շահառուն, միջոցառումների առաջարկները ներկայացվելու են վերջիններիս կողմից՝ համաձայն սույն հրամանով հաստատված ընթացակարգի:

4) 2023 թվականին տվյալ ուղղության միջոցառումները նախատեսվում է իրականացնել հետևյալ թեմաներով.

ա) Ներդրումներ

բ) Գիտություն և նորարություններ

գ) Արդյունաբերություն և ստեղծագործ ծառայություններ (դիզայն, նորաձևություն, ճարտարապետություն)

5) Ծախսերը կարող են ներառել.

ա) տարածքի վարձակալություն,

բ) տարածքի կահավորում և դրա գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսեր,

գ) մարքեթինգային և հանրահռչակման ծառայություններ,

դ) գովազդային նյութերի դիզայն, թարգմանություն և տպագրություն,

ե) հյուրասիրություն:

6) Այն դեպքերում, երբ միջոցառումը կազմակերպվում է Հայաստանում և միջոցառմանը մասնակցում են արտասահմանից հրավիրված հյուրեր, ծախսերը կարող են նաև ներառել հրավիրված հյուրերի ճանապարհածախս և կացության ծախսեր:

8. Միջոցառման **Արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում ուղղության** շրջանակում շահառուներին կտրամադրվի հետևյալ աջակցությունը.

1) Օտարերկրյա պետությունում կամ Հայաստանում գովազդային արշավների, ցուցադրությունների և այլ համանման միջոցառումների կազմակերպման ֆինանսավորում՝ ծախսերի մինչև 100%-ի չափով:

2) Այն դեպքերում, երբ նախաձեռնողը կլինի շահառուն և ոչ էկոնոմիկայի նախարարությունը, սույն հրամանով սահմանված կարգով ընտրված միջոցառումները կհամաֆինանսավորեն 20 մլն դրամի չափով, բայց ոչ ավել քան միջոցառման ընդհանուր բյուջեի 80%-ը: Մնացյալ ծախսը պետք է ֆինանսավորվի շահառուի կողմից, ընդ որում շահառուն այն կարող է ֆինանսավորել այլ հովանավոր և (կամ) դոնոր կազմակերպությունների միջոցով:

3) Այն դեպքերում, երբ նախաձեռնողը կլինի շահառուն, միջոցառումների առաջարկները ներկայացվելու են վերջիններիս կողմից՝ համաձայն սույն հրամանով հաստատված ընթացակարգի:

4) 2023 թվականին նախատեսվում է միջոցառումները իրականացնել տվյալ ուղղության շրջանակներում նախարարության կողմից առաջնահերթ համարվող հետևյալ ոլորտներում.

ա) դիզայն,

բ) նորաձևություն,

դ) ճարտարապետություն:

5) Ծախսերը կարող են ներառել.

ա) տարածքի վարձակալություն,

բ) տարածքի կահավորում և դրա գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսեր,

գ) մարքեթինգային և հանրահռչակման ծառայություններ,

դ) գովազդային նյութերի դիզայն, թարգմանություն և տպագրություն,

ե) հյուրասիրություն:

6) Այն դեպքերում, երբ միջոցառումը կազմակերպվում է Հայաստանում, և միջոցառմանը մասնակցում են արտասահմանից հրավիրված հյուրեր, ծախսերը կարող են նաև ներառել հրավիրված հյուրերի ճանապարհածախս և կացության ծախսեր:

9. Բոլոր երեք ուղղություններով իրակացվող միջոցառումների դեպքում.

1) երբ կազմակերպումը նախաձեռնվում է շահառուների կողմից, աջակցությունը տրամադրվում է որպես դրամաշնորհ շահառուին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշման: Ընդ որում.

ա) Շահառուի կողմից ներկայացված փաթեթը պետք է ներառի միջոցառման ամբողջ բյուջեն, ՀՀ ԷՆ կողմից համաֆինանսավորման չափը, ինչպես նաև ներկայացվի մյուս մասի ֆինանսավորման աղբյուրները:

բ) Շահառուի կողմից ներկայացված փաթեթում պետք է ներկայացված լինի միջոցառման մանրամասն նկարագիրը, ոլորտը, ոլորտի վրա ազդեցության ակնկալվող որակական գնահատականը, արտերկում ոլորտի և (կամ) հայկական ապրանքանիշի վրա հասարակական կարծիքի ձևավորման ազդեցության ակնկալվող որակական գնահատականը:

2) երբ միջոցառման կազմակերպումը նախաձեռնվում է էկոնոմիկայի նախարարության կողմից, ֆինանսավորումը տրամադրվում է համապատասխան օտարերկրյա կազմակերպիչ ընկերությանը՝ ուղիղ:

3) Շահառուն պետք է ներկայացնի դիմում՝ համաձայն սույն հրամանով սահմանված կարգի:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
«_26__»___05_____2023 թ. N__919-Ա___ հրամանի

Կ Ա Ր Գ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՆՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Էկոնոմիկայի նախարարությունը իր կայքէջում տեղադրում է հայտարարություն, որտեղ նշվում է միջոցառման ուղղությունը և թեման, ինչպես նաև մանրամասներ՝ դրամաշնորհային առաջարկների ընդունման հայտի ձևի, պայմանների և դիմելու վերջնաժամկետի վերաբերյալ:
2. Շահառուները ներկայացնում են իրենց առաջարկները էլեկտրոնային եղանակով՝ մինչև հայտարարությամբ նշված վերջնաժամկետը:
3. Հայտերը ուսումնասիրվում են նախարարի հրամանով հաստատված հանձնաժողովի կողմից, և, համաձայն տվյալ տարվա բյուջեով հաստատված քանակական ցուցանիշների, ընտրվում են այն առաջարկները, որոնք առավելագույնս համապատասխանում են միջոցառման նպատակներին, պայմաններին և ակնկալվող արդյունքներին:
4. Վերջնաժամկետի լրանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում բոլոր դիմորդները ծանուցվում են հանձնաժողովի կողմից կայացված մերժման կամ հաստատման որոշման մասին:
5. Հաստատված շահառուների հետ էկոնոմիկայի նախարարությունը կնքում է պայմանագիր ծանուցումից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:
6. Ծրագրով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում՝ գործընթացը դադարեցվում է, և պայմանագիրը՝ չեղարկվում:
7. Ցուցահանդեսի ավարտից հետո շահառուն ներկայացնում է կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն՝ պայմանագրով նախատեսված ձևաչափին համապատասխան:

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի
«_26__»___05_____2023 թ. N__919-Ա___ հրամանի

Կ Ա Ր Գ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ՝ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՆՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. Էկոնոմիկայի նախարարությունը պետք է հստակ սահմանի նախաձեռնության նպատակները, ոլորտը, թեման, ներառյալ՝ ցանկալի արդյունքները և ակնկալվող ոլորտային ազդեցությունը:
2. Էկոնոմիկայի նախարարությունը թիրախային ոլորտների համար կատարած վերլուծության հիման վրա ընտրում է նպատակային շուկաներ և նախաձեռնությունը իրականացնում ընտրված երկրներում:
3. Նախաձեռնության կազմակերպման նպատակով էկոնոմիկայի նախարարության կողմից ընտրվում է օտարերկրյա կազմակերպիչ ընկերություն, որը պետք է
   ա) ունենա համապատասխան փորձ (կազմակերպած լինի առնվազն 1 նմանատիպ միջոցառում)
   բ) հանդիսանա ընտրված երկրում գրանցված կազմակերպություն
4. Էկոնոմիկայի նախարարությունը չափանիշներին համապատասխան օտարերկրյա կազմակերպիչ ընկերության հետ կնքում է պայմանագիր, որից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում սահմանված ֆինանսավորումն ուղիղ կերպով տրամադրվում է ընկերությանը:
5. Էկոնոմիկայի նախարարությունը մասնակցում է նախաձեռնության իրազեկման աշխատանքներին Հայաստանի Հանրապետությունում և հավաքագրում Հայաստանի կողմից ոլորտի ներկայացուցիչների մասնակցության վերաբերյալ տվյալներ: